ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ԶԱՅՆԸ

Գեղանկարչական և
լուսանկարչական
ստեղծագործությունների
ժողովածու

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՁԱՅՆԸ

**Լուսանկարչական, գեղանկարչական
և կիրառական արվեստի
ստեղծագործությունների ժողովածու**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 08
ԳՄԴ 94
Ա 596

Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի և «Total-Art» հասարակական կազմակերպության կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աննա Հարությունյան
Կարինե Դավթյան

Ա 596 Անկախության սերնդի ձայնը: Լուսանկարչական, գեղանկարչական և կիրառական արվեստի ստեղծագործությունների ժողովածու/Խմբ. Խորհուրդ՝ Աննա Հարությունյան, Կարինե Դավթյան; Երևանի պետական համալսարան. Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն, -Եր.: ԵՊՀ հրատ., 2023, 78 էջ:

Ժողովածուն ընդգրկում է «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների ու կատարողների հանրապետական ուսանողական բիենալեի մրցույթում պարգևատրված մասնակիցների ստեղծագործությունները (2021 թ.):

ՀՏԴ 08
ԳՄԴ 94

ISBN 978-5-8084-2585-9

© ԵՊՀ հրատ., 2023
© Կազմողի համար, 2023

Հավաքական կամքի արտահայտության շնորհիվ անշրջելի իրողություն դարձած անկախությունը մեր ժողովրդի կարևորագույն ձեռքբերումն է: Անկախությունը կարողություն է, որը թույլ է տալիս սահմանել սեփական նպատակները, երազանքներն ու այն քայլերը, որոնցով կարելի է հասնել դրանց իրագործմանը:

Երևանի պետական համալսարանն այն կարևոր հանգույցն է, որը կարող է ստեղծել համապատասխան ներուժ և միջավայր, որոնք կնպաստեն մեր երկրի անկախության և ինքնիշխանության պահպանմանն ու ամրապնդմանը: ԵՊՀ-ն նաև մեր մշակութային արժեքների պահպանման ու կերտման գլխավոր հարթակներից մեկն է, ուստի պատահական չէ, որ համալսարանում ավելի քան 15 տարի հաջողությամբ գործում ու իր կարևոր առաքելությունն է իրականացնում Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը:

Դառնալով ԵՊՀ ուսանողների մշակութային ունակությունների զարգացման, նրանց գեղագիտական ճաշակի ձևավորման ու ամրապնդման, ինչպես նաև ինքնաբացահայտման հարթակ՝ կենտրոնն ընձեռում է լայն հնարավորություններ՝ ստեղծագործելու և տաղանդը դրսևորելու համար: Այդպիսի հնարավորություն է նաև արդեն ավանդույթ դարձած մրցույթ-փառատոնի իրականացումը, որն անցկացվում է տարբեր խորագրերի ներքո ու բացահայտում տաղանդավոր ու ստեղծագործ ուսանողներին: Միջոցառումն այս անգամ բացահայտել է գրականության, կերպարվեստի ու կիրառական արվեստի ոլորտներում ստեղծագործող ուսանողներին, որոնց լավագույն աշխատանքները տեղ են գտել այս ժողովածուում:

«Անկախության սերնդի ձայնը» խորհրդանշական անվանումով այս ժողովածուն ներկայացնում է մեր երիտասարդների ձայնը, որոնք խոսում են արվեստի լեզվով ու գեղարվեստական շնորհներով դրսևորում իրենց խոհերն ու զգացմունքները: Այս տեսանկյունից անչափ կարևոր են ժողովածուի դերն ու նշանակությունը. այն հիանալի հնարավորություն է երիտասարդների աչքերով տեսնելու իրականությունը, հասկանալու նրանց արձագանքը մեր շուրջը կատարվող դեպքերին ու իրադարձություններին և, ինչու չէ, իմանալու, թե ինչպիսինն են ապագայի վերաբերյալ նրանց պատկերացումներն ու երազանքները:

Ջերմորեն շնորհավորում եմ ժողովածուում տեղ գտած աշխատանքների հեղինակներին՝ նրանց մաղթելով ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուրներ ու նորանոր հաջողություններ:

Հովհաննես Հովհաննիսյան
պատմական գիտությունների դոկտոր,
Երևանի պետական համալսարանի ռեկտոր

Մշակույթը կոդավորված իմաստություն է:
Վանգարի Մաատայի

Յուրաքանչյուր սերունդ իր իմաստության ժառանգությունը թողնում է մշակույթի միջոցով, այստեղից էլ բխում է «մշակութային ժառանգություն» արտահայտությունը: Երևանի պետական համալսարանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը, որն արդեն գործում է տասնվեց տարի, հետևողականորեն իրականացնում է սերունդների մշակութային դաստիարակությունը: Դա կատարվում է տարբեր ձևաչափերով, ինչպես, օրինակ, կենտրոնում գործող մշակութային խմբերի, բազմաբնույթ ծրագրերի, դասախոսությունների, այցելությունների, փառատոնների, մրցույթների, մշակույթի մեծանուն գործիչների հետ հանդիպումների միջոցով: Այդպիսի ծրագրերից մեկն է նաև «Անկախության սերնդի ձայնը» խորագիրը կրող «Երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեն», որն իրականացվում է 2016 թվականից սկսած՝ երկու տարին մեկ անգամ: Համաշխարհային համավարակով պայմանավորված՝ այս անգամ մրցույթը իրականացվել է հեռավար ձևաչափով: Մրցույթին մասնակցել են Հայաստանի Հանրապետության, ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ տարբեր շրջանների համալսարանների ուսանողներ: Մրցույթի արդյունքում արհեստավարժ ժյուրիի ընտրությամբ համապատասխանաբար առանձնացվել են առաջին, երկրորդ, երրորդ տեղեր և գլխավոր մրցանակ՝ հետևյալ անվանակարգերում՝ գրական մրցույթում՝ «Լավագույն բանաստեղծություն», «Լավագույն արձակ» և «Լավագույն էսսե», և արվեստի մրցույթում՝ «Գեղանկարչություն», «Լուսանկարչություն» և «Կիրառական արվեստ»: Այս ժողովածուն ներառում է այդ անվանակարգերում հաղթողների լավագույն ստեղծագործությունները: Ցանկանում եմ շնորհավորել մասնակից ու անվանակարգեր զբաղեցրած բոլոր ուսանողներին և մաղթել նորանոր հաջողություններ, կրթական և աշխատանքային բազում հագեցած տարիներ, ստեղծագործական հաջողություններ՝ ի նպաստ հայ մշակույթի զարգացմանը և մեր երկրի առաջընթացին:

Կարինե Դավթյան
ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն,
«Համալսարանական» թատրոն-ստուդիայի
գեղարվեստական ղեկավար

«Անկախության սերնդի ձայնը» խորագիրը կրող «Երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեն» բացառիկ հարթակ է, որը հնարավորություն է տալիս բացահայտելու մեր երկրում ստեղծագործող տաղանդաշատ ուսանողներին և հանրայնացնելու վերջիններիս աշխատանքը: ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնն արդեն տարիներ շարունակ իրականացնում է այս հրաշալի փառատոնը, և մեծ ուրախությամբ ուզում եմ նշել, որ կենտրոնի հետ համագործակցում եմ երկար տարիներ և որպես արվեստագետ, նկարիչ ու դիզայներ սիրով իմ գնահատականն եմ տալիս մեր նոր սերնդին:

Որպես մրցույթի՝ «արվեստ» անվանակարգի ժյուրիի նախագահ շատ եմ գնահատում այն փաստը, որ մրցույթի արդյունքում ընտրված լավագույն ստեղծագործությունների հիման վրա տպագրվում է ժողովածու, որը մնայուն արժեք է և՛ համալսարանի, և՛ Հայաստանի համար:

Արվեստում չպետք խաբել. այն մի օր հարվածելու է քեզ: Ուզում եմ, որ մեր երկրի բոլոր ստեղծագործ երիտասարդները ստեղծեն մերը և այն հանրայնացնեն ամբողջ աշխարհում, լինեն անկեղծ իրենք իրենց ներաշխարհի հետ, չամաչեն բացահայտվելուց և անվերջ ստեղծագործեն, քանի որ այս կյանքում բոլորս տարբեր ենք ու եկել ենք աշխարհ մեր առաքելությամբ:

Աննա Հարությունյան
ՀՀ վաստակավոր նկարչուհի,
«Total-Art» հասարակական կազմակերպության
նախագահ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ,
ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ
ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լուսանկարչություն

Արզունիկ Գևորգյան

Ծնվել է 1997 թ. հուլիսի 9-ին Արմավիրում: 2004-2012 թթ. սովորել է Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցում: 2012-2015 թթ. ուսանել է Ռուբիկ Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոցում: 2016-2020 թթ. սովորել ու ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը՝ «Միջուկային ֆիզիկա և ատոմային էներգետիկա» մասնագիտությամբ: 2020-2022 թթ. նույն մասնագիտությամբ ուսումը շարունակել է մագիստրատուրայում: 2016 թվականից ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան է: 2019 թվականից աշխատում է Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում որպես կրտսեր գիտաշխատող, ինչպես նաև Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնի (CERN) «CMS» համագործակցության (կոլաբորացիա) անդամ է:

2019 թ. անցել է ՔԵՆԴԼ սինխրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի, Համբուրգի և Երևանի պետական համալսարանների կազմակերպած «Արագացուցչային ֆիզիկա» հայ-գերմանական համատեղ դասընթացը: 2020 թ. հունիսին արժանացել է «SPIE» միջազգային կազմակերպության Չանդիգարխի մասնաճյուղի «The Optical Phenomena of Light in Our Daily Life» թեմայով կազմակերպած «Jyotirmoy» մրցույթի առաջին տեղի մրցանակին:

2020 թ. դեկտեմբերից մինչև 2022 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում եղել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահը: 2021-2022 թթ. (հունվար) եղել է Եվրոպայի ֆիզիկոսների ասոցիացիայի (EPS) «Երիտասարդ մտքեր» ծրագրի երևանյան մասնաճյուղի նախագահը, 2021 թ. մարտից՝ նախկին Օպտիկայի ամերիկյան ասոցիացիայի (ներկայումս՝ OPTICA) ԵՊՀ մասնաճյուղի քարտուղարը: Նշված կազմակերպությունների գործունեության շրջանակում 2020-2022 թթ. կազմակերպել է մի շարք գիտական դպրոցներ, ճամբարներ, սեմինարներ (այդ թվում՝ նաև միջազգային) ուսանողների ու աշակերտների համար: 2022 թ. մասնակցել է «Իմ քայլը» հիմնադրամի «Quanta» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագրի ամառային դպրոցին:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում արժանացել է գլխավոր՝ «Գրան պրի» մրցանակին:

«Մեկնարկ»

«My way»

«Անդորր»

«Ժամանակի միջով»

«Ֆիբոնաչի»

«Հոգատարություն»

«Բալանս»

Անահիտ Խառատյան

Ծնվել է 2000 թ. ապրիլի 17-ին Լոռու մարզի Մարգահովիտ գյուղում: 2006-2018 թթ. ուսանել է Մարգահովիտի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ 2018-2022 թթ.՝ Վանաձորի պետական համալսարանի հասարակական գիտությունների «Կերպարվեստ» բաժնում: Համալսարանական տարիներին մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, այդ թվում՝ նաև 2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեին («գեղանկարչություն» անվանակարգում):

Ա. Խառատյանի աշխատանքները ցուցադրվել են Վանաձորի կերպարվեստի թանգարանում Մայրության և գեղեցկության օրվան նվիրված միջոցառման շրջանակում: Ներկայումս Ա. Խառատյանը սովորում է Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի «Գրաֆիկական դիզայն» բաժնում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

«Տիեզերքն իմ աչքերով»

«Եդեմական»

«Հույս»

«Անձեռակերտ»



«Անձեռակերտ»

Անուշ Աբրահամյան

Ծնվել է 2000 թ. հուլիսի 26-ին Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղում: 2018 թ. գերազանցությամբ ավարտելով տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ: 2016 թվականից առ այսօր «Հայաստանի պատանի թղթակիցներ» ցանցի՝ «17.am»-ի թղթակից է: Համալսարան ընդունվելու առաջին իսկ տարուց Մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան է, մասնակցել է մի շարք միջոցառումների, որոնցից առավել նշանակալի է մասնակցությունը Տ. Չուխաջյանի՝ ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Կարինե» օպերետի ուսանողական պրեմիերային: 2019 թ. համագործակցել է «Թոնդրակ» արշավական ակումբի հետ, որի ֆիլմ-ստուդիայում խոսնակ է առ այսօր:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

«Բնության զարկերակը»

«Բնության զարկերակը»

«Բնության զարկերակը»

Արինա Անտոնյան

Ծնվել է 2003 թ. հունիսի 23-ին Կոտայքի մարզի Զորավան գյուղում: 2009-2021 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ 2010-2017 թթ.՝ «Արս Մաժոր» արվեստի դպրոցի դաշնամուրային բաժնում, իսկ 2020 թ.՝ «Աբելյան» արվեստի դպրոցի «Կինոարտադրություն» բաժնում, սակայն համաճարակի պատճառով կրթությունը մնացել է թերի: 2021 թվականից սովորում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Հոգեբանություն» բաժնում: Արդեն 3 տարի զբաղվում է սիրողական լուսանկարչությամբ:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

«Ակնթարթ»

«Անվերնագիր»

«Անվերնագիր»

«Անվերնագիր»

Թամարա Սարգսյան

Ծնվել է 2002 թ. հուլիսի 16-ին Ստեփանակերտում: 2008-2017 թթ. սովորել և ավարտել է Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցը: 2017-2020 թթ. ուսանել ու ավարտել է Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցը: 2020 թ. ընդունվել է Հայ-ռուսական համալսարանի տուրիզմի ֆակուլտետ, որտեղ շարունակում է սովորել առ այսօր: 2019-2020 թթ. աշխատել է Ստեփանակերտի «Ֆլորենս Գարդեն» ՍՊԸ-ում որպես ադմինիստրատոր-գանձապահ: 2022 թվականից մինչ օրս աշխատում է որպես լուսանկարիչ ամերիկյան ընկերությունում:

Մասնակցել է բազմաթիվ մրցույթների (ասմունքի, թատրոնի, լուսանկարչության), զբաղեցրել առաջին, երկրորդ պատվավոր մրցանակային տեղեր, պարգևատրվել գովասանագրերով: Արցախյան 44-օրյա պատերազմից հետո տեղափոխվել է Երևան: Լուսանկարչությամբ սկսել է զբաղվել դեռևս դպրոցական տարիներից, երբ հաճախել է «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է երկրորդ պատվավոր հորիզոնականը:

«Born of War»

«Born of War»

Տաթևիկ Կատվալյան

Ծնվել է 1999 թ. դեկտեմբերին Հայաստանում: 2006-2014 թթ. սովորել է Մուշեղ Մխոյանի անվան թիվ 68 դպրոցում, 2014-2017 թթ.՝ Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջի «Կառավարում» բաժնում: 2017-2022 թթ. ուսանել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոնոմիական ֆակուլտետի «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» բաժնում: 2017 թ. կատարել է կամավորական աշխատանք «Yerevan Half Marathon»-ի շրջանակում: 2019 թ. ապրիլին մասնակցել է «Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված կամավորական աշխատանքներին: 2021 թ. պրակտիկա է անցել «ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ում: 2021 թ. հոկտեմբերին պրակտիկա է անցել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ջերմոցատնկարանային տնտեսությունում: 2022 թ. ապրիլ-մայիս ամիսներին պրակտիկա է անցել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ում: 2022 թ. մայիսին «Հայաստանում աշխատուժի զարգացում» ծրագրի շրջանակում մասնակցել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից կազմակերպված «Փափուկ հմտություններ-անձնային աճ կարիերայի պլանավորում և կառավարում» դասընթացին (12 ժամ տևողությամբ):

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է երկրորդ պատվավոր հորիզոնականը:

«Անվերնագիր»

«Վերածնունդ»

«Հոգու հայելի»

«Բնության մեղեդին»

Լիլիթ Ֆրանցուզյան

Ծնվել է 2002 թ. նոյեմբերի 20-ին Արարատի մարզի Ազատաշեն գյուղում: Սովորել է տեղի հիմնական դպրոցում, ավարտել է այն 2017 թ.: Դպրոցին զուգընթաց յոթ տարի հաճախել է պարի դասերի, մասնակցել մի շարք համերգների, այնուհետև՝ երկու տարի հաճախել նկարչության դասերի: 2017 թ. ընդունվել է Երևանի պետական հումանիտար քոլեջի «Զարդային-կիրառական արվեստ» բաժինը: 2021 թ. ավարտել է քոլեջը և ընդունվել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Հոգեբանություն» բաժինը: Մասնակցել է տարբեր մրցույթների, ինչպես նաև ազգային պարերի դասընթացների:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է երկրորդ պատվավոր հորիզոնականը:

«Գարնան բույրը»

«Երևանի հին, բայց հարազատ կողմը»

Էլիզա Կրիկորյան

Ծնվել է 2003 թ. Երևանում: Սովորում է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի լրագրության ֆակուլտետում: Ավարտել է ՃՇՀԱՀ ՄՄԿ քոլեջի տուրիզմի ֆակուլտետը, ինչպես նաև Հայկանուշ Դանիելյանի անվան արվեստի դպրոցը: Ունի շատ նախասիրություններ, որոնցից ամենասիրելի զբաղմունքը լուսանկարչությունն է: Լուսանկարչության ոլորտում մասնագիտական կրթություն չունի. ինքնուս է, սակայն կարևորում է նկարել այն ամենը, ինչը հետաքրքիր է, յուրահատուկ ու արժանի մարդկային ուշադրությանը: Լուսանկարչությունից բացի՝ նաև երգում է, կիթառ նվագում, զբաղվում նկարչությամբ ու ստեղծագործում: Վստահ է, որ արվեստի ուժը ազատության մեջ է:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

«Արհեստավորի ձեռքերը»



«Վարդագույն մոլորակում»

«Երկու բնություն»

«Քարե մարդիկ»

«Հույս»

Աստղիկ Մուրադյան

Ծնվել է 2003 թ. ապրիլի 22-ին Արմավիրի մարզի Մարգարա գյուղում: 2007-2019 թթ. հաճախել է Մարգարայի միջնակարգ դպրոց: Դպրոցին զուգահեռ հաճախել է պարի դասերի, մասնակցել է համերգների ու մրցույթների: Մասնակցել է «Juniors achivement of Armenia» ձեռնարկատիրական դասընթացներին և 2017 թ. հաղթող ճանաչվել այդ կազմակերպության ամառային ճամբարի մրցույթում: 2020 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, դարձել է «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան՝ անդամագրվելով ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում: Աշխատել է «Хроногрaф» էլիտար շվեցարական ժամացույցների լոմբարդում որպես «content writher»: 2022 թվականից ուսանում է ՀԱՊՀ ՄՏԴ ինստիտուտի դիզայնի ֆակուլտետում՝ «Համակարգչային գրաֆիկա» կրթական ծրագրով:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

«Զևս և Պոսեյդոն»

«Մինչ հանդիպում»

«Լույսը թունելից»

«Լուսնի սոնատ»

«Բարի լույս»

Նանե Սարգսյան

Ծնվել է 2003 թ. նոյեմբերի 19-ին Գորիսում: 2006-2009 թթ. հաճախել է Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախակրթարան, 2009 թ.՝ Սերո Խանզադյանի անվան թիվ 6, 2013 թ.՝ Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցներ, այնուհետև՝ 2018 թվականից սկսած, սովորել է թիվ 4 ավագ դպրոցում: 2021 թվականից ուսանում է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Հոգեբանություն» բաժնում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

«Հույսի հայրենիք»

«Հավատք առ Աստված»

«Արտացոլանք»

Իլոնա Ղազարյան

Ծնվել է 2003 թ. հունիսի 17-ին Ղազախստանի Հանրապետության Ակտաու քաղաքում: 2009-2018 թթ. սովորել է Երևան քաղաքի թիվ 27 միջնակարգ դպրոցում: Ուսմանը զուգընթաց սովորել է նաև Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի լատինաամերիկյան պարերի բաժնում: 2017 թ. հաղթել է «Իմ սիրելի հուշարձանը» խորագրով շարադրության մրցույթում: 2018-2021 թթ. սովորել է Երևանի թիվ 119 ավագ դպրոցում: 2021 թ. ընդունվել և առ այսօր սովորում է Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի «Անգլերեն-իսպաներեն» բաժնում: 2021 թ. մասնակցել է «Ռուսական պոեզիա Հայաստանի մասին» մրցույթին՝ արժանանալով «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգին:

Ի. Ղազարյանը սիրում է լուսանկարչությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս հավերժացնելու մարդու համար մեծ նշանակություն ունեցող դրվագներն ու պահերը: Խորապես համոզված է, որ լուսանկարների միջոցով անցյալի ջերմությունը կարելի է փոխանցել ապագային:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի լուսանկարչության մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի:

«Լոնդոնը իմ պատշգամբից»



«Խոստումնալից առավոտ»

«Շատրվանների պարը»

Գեղանկարչություն

Զոյա Սարգսյան

Ծնվել է 2000 թ. հունիսի 2-ին ԼՂՀ Քաշիթաղի շրջանի Բերձոր քաղաքում: 2002 թ. տեղափոխվել է ապրելու Վայոց ձորի Մալիշկա գյուղ: Ավարտել է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի երաժշտական դպրոցը: 2017-2021 թթ. ընդունվել է ԵՊԿ և սովորել «Ակադեմիական երգեցողություն» բաժնում: Այնուհետև ուսումը շարունակել է մագիստրատուրայում: Վերջին մի քանի տարիների ընթացքում մասնակցել է մի շարք համերգների, ցուցահանդեսների, մրցույթների, արժանացել մրցանակների:

2021 թ. մայիսի 4-ին հանդես է եկել մենահամերգով «Նարեկացի» արվեստի միությունում: Նույն թվականի հունիսի 18-25-ը ունեցել է անհատական ցուցահանդես Ժամանակակից արվեստի թանգարանում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գեղանկարչության մրցույթում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

«Աբստրակցիա»

«Աբստրակցիա»

«Աբստրակցիա»

Էլինե Պողոսյան

Ծնվել է 1997 թ. հոկտեմբերի 26-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում, երկու տարի հետո ընտանիքով տեղափոխվել է մայրաքաղաք Երևան: 2004 թ. հաճախել է Երևանի թիվ 179 հիմնական դպրոց, այնուհետև՝ 2013 թ.՝ թիվ 105 ավագ դպրոց՝ պատմահրավագիտական առարկաների ուսումնասիրման ուղղությամբ: 2015-2019 թթ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետ: ԵՊՀ-ում սովորելուն զուգահեռ 2018-2020 թթ. ուսանել է նկարչական ստուդիայում, որտեղ հմտացել է ստեղծագործելու ուղղությամբ: 2019 թ. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության» լրատվական բաժնում անցել է մասնագիտական փորձառություն:

2019-2021 թթ. սովորել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մագիստրատուրայում՝ «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» մասնագիտացմամբ: Ուսանողական տարիներին ակտիվ ստեղծագործել է, մասնավորապես զբաղվել գեղանկարչությամբ և հիմնել իր հագուստի «Poghosian arts» բրենդը, որի հիմքը հագուստի մոդելավորումն է և ստեղծագործական աշխատանքը տեքստիլ նկարչության համատեքստում: Ստեղծագործական գործունեության առանցքում եղել են կավե զարդերի պատրաստումն ու գեղանկարչությունը: Ներկայումս 50-ից ավել կտավի և 800-ից ավել հագուստի հեղինակ է: 2022 թ. ապրիլի 9-13-ը Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպվել է Է. Պողոսյանի առաջին անհատական ցուցահանդեսը:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գեղանկարչության մրցույթում զբաղեցրել է երկրորդ պատվավոր հորիզոնականը:

«Հին դուռը»



«Հայելի»

«Ծիրանագույն արժեք»

Անահիտ Խառատյան

Ծնվել է 2000 թ. ապրիլի 17-ին Լոռու մարզի Մարգահովիտ գյուղում: 2006-2018 թթ. սովորել է Մարգահովիտի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ 2018-2022 թթ.՝ Վանաձորի պետական համալսարանի հասարակական գիտությունների «Կերպարվեստ» բաժնում: Համալսարանական տարիներին մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, այդ թվում՝ նաև 2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեին («գեղանկարչություն» անվանակարգում):

Ա. Խառատյանի աշխատանքները ցուցադրվել են Վանաձորի կերպարվեստի թանգարանում, Մայրության և գեղեցկության օրվան նվիրված միջոցառման շրջանակում:

Ներկայումս Ա. Խառատյանը սովորում է Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի «Գրաֆիկական դիզայն» բաժնում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գեղանկարչության մրցույթում զբաղեցրել է երկրորդ պատվավոր հորիզոնականը:

«Իմ Լոռի»

Աննա Պեպանյան

Ծնվել է 2000 թ. օգոստոսի 6-ին Լոռու մարզում: Նախնական կրթությունը ստացել է Վ. Համբարձումյանի թիվ 25 միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ 2016 թ.՝ ավարտել դպրոցը և կրթությունը շարունակել ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցում: 2018 թ. ուսանել է Վանաձորի պետական համալսարանի «Կերպարվեստ» բաժնում: Ներկայումս սովորում է 3-րդ կուրսում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գեղանկարչության մրցույթում զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

«Դեղձերով նատյուրմորտ»

«Դիմանկար»

Լիլիթ Ֆրանցուզյան

Ծնվել է 2002 թ. նոյեմբերի 20-ին Արարատի մարզի Ազատաշեն գյուղում: Սովորել է տեղի հիմնական դպրոցում, ավարտել է այն 2017 թ.: Դպրոցին զուգընթաց յոթ տարի հաճախել է պարի դասերի, մասնակցել մի շարք համերգների, այնուհետև՝ երկու տարի հաճախել նկարչության դասերի: 2017 թ. ընդունվել է Երևանի պետական հումանիտար քոլեջի «Զարդային-կիրառական արվեստ» բաժինը: 2021 թ. ավարտել է քոլեջը և ընդունվել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Հոգեբանություն» բաժինը: Մասնակցել է տարբեր մրցույթների, ինչպես նաև ազգային պարերի դասընթացների:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գեղանկարչության մրցույթում զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

«Նատյուրմորտ»

«Նատյուրմորտ»

Գագիկ Ավետիսյան

Ծնվել է 1993 թ. սեպտեմբերի 3-ին Երևանում՝ դրամատուրգ և մեծ հայրենասեր Հարություն Երևանցու ընտանիքում: Նախադպրոցական տարիքից սիրել է նկարել և իր պատկերագրական ունակությունները հմտացրել է Մինաս Ավետիսյանի կերպարվեստի դպրոցում: 2010-2013 թթ. ստացել է նեղ մասնագիտական կրթություն Երևանի պետական հումանիտար քոլեջի «Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ» բաժնի դիզայնի ոլորտում:

Ստեղծագործական բուռն վերելքը սկսվել է 2013 թվականից՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Կերպարվեստի» բաժնում ուսանած տարիներից նախ որպես բակալավրիատի, ապա՝ մագիստրատուրայի ուսանող, իսկ ներկայումս՝ արդեն նաև իբրև հայցորդ: Ուսումնառության ընթացքում ունեցել է երկու անհատական ցուցահանդես, մասնակցել մի քանի տեղական ու միջազգային նշանակության սիմպոզիումների, հռչակվել է «Ամենաինտելեկտուալ ուսանող» և ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Լավագույն ընթերցող», կազմել և հրատարակել է մի քանի գիտական աշխատություններ, ներառյալ Արցախյան ազատամարտին նվիրված «Միր Բաշիր. պատերազմ և զինադադար» գիրքը: Արժանացել է բազմաթիվ պատվոգրերի ու շնորհակալագրերի, որոնց թվում՝ Արարատյան հայրապետական թեմի կողմից անցկացվող «Սուրբ Սարգիս», միջազգային նշանակության «Պլենեռ Հայաստան» և բնապահպանական ուղղվածության «Էկո Սևան» միջոցառումների վկայագրերը:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գեղանկարչության մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի:

«Ազատամարտիկներն աղբյուրի մոտ, Շուշի»

Կիրառական արվեստ

Էլինե Պողոսյան

Ծնվել է 1997 թ. հոկտեմբերի 26-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում, երկու տարի հետո ընտանիքով տեղափոխվել է մայրաքաղաք Երևան: 2004 թ. հաճախել է Երևանի թիվ 179 հիմնական դպրոց, այնուհետև՝ 2013 թ.՝ թիվ 105 ավագ դպրոց՝ պատմահրավագիտական առարկաների ուսումնասիրման ուղղությամբ: 2015-2019 թթ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետ: ԵՊՀ-ում սովորելուն զուգահեռ 2018-2020 թթ. ուսանել է նկարչական ստուդիայում, որտեղ հմտացել է ստեղծագործելու ուղղությամբ: 2019 թ. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության» լրատվական բաժնում անցել է մասնագիտական փորձառություն:

2019-2021 թթ. սովորել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մագիստրատուրայում՝ «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» մասնագիտացմամբ: Ուսանողական տարիներին ակտիվ ստեղծագործել է, մասնավորապես զբաղվել գեղանկարչությամբ և հիմնել իր հագուստի «Poghosian arts» բրենդը, որի հիմքը հագուստի մոդելավորումն է և ստեղծագործական աշխատանքը տեքստիլ նկարչության համատեքստում: Ստեղծագործական գործունեության առանցքում եղել են կավե զարդերի պատրաստումն ու գեղանկարչությունը: Ներկայումս 50-ից ավել կտավի և 800-ից ավել հագուստի հեղինակ է: 2022 թ. ապրիլի 9-13-ը Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպվել է Է. Պողոսյանի առաջին անհատական ցուցահանդեսը:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի կիրառական արվեստի մրցույթում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

«Poghosian arts»

«Poghosian arts»

«Poghosian arts»

«Poghosian arts»

«Poghosian arts»

Մարինե Գրիգորյան

Ծնվել է 1999 թ. հունվարի 10-ին Սպիտակ քաղաքում: 2005-2013 թթ. սովորել է Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ա. Մյասնիկյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում, 2009-2013 թթ.՝ Սպիտակի գեղարվեստի դպրոցում: 2013-2018 թթ. ուսանել է Վանաձորի Մ. Թավրզյանի անվան արվեստի պետական քոլեջում՝ «Գեղանկարչություն» բաժնում: 2018-2022 թթ. սովորել է Վանաձորի պետական համալսարանում՝ «Կերպարվեստ» մասնագիտությամբ: 2018 թվականից աշխատել է Սպիտակի գեղարվեստի դպրոցում որպես ուսուցիչ: 2020 թ. մասնակցել է «ԵՄ կայուն էներգիայի շաբաթ-2020» ծրագրի «Ճգնաժամից դուրս՝ մաքուր էներգիա կանաչ վերականգնման և աճի համար» խորագրով նկարչական աշխատանքների մրցույթին՝ զբաղեցնելով առաջին հորիզոնականը: 2021 թ. մասնակցել է Վանաձորի կերպարվեստի թանգարանում կազմակերպված «Հավերժի գրավականը» խորագրով ամենամյա ցուցահանդեսին:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի կիրառական արվեստի մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի իր «Հայուհի» գոբելենի համար:

«Հայուհի»

Բովանդակություն

Ողջույնի խոսքեր 3

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ, ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լուսանկարչություն

Արզունիկ Գևորգյան 9
Անահիտ Խառատյան 14
Անուշ Աբրահամյան 20
Արինա Անտոնյան 24
Թամարա Սարգսյան 27
Տաթևիկ Կատվալյան 29
Լիլիթ Ֆրանցուզյան 33
Էլիզա Կրիկորյան 36
Աստղիկ Մուրադյան 40
Նանե Սարգսյան 44
Իլոնա Ղազարյան 47

Գեղանկարչություն

Զոյա Սարգսյան 51
Էլինե Պողոսյան 54
Անահիտ Խառատյան 58
Աննա Պեպանյան 60
Լիլիթ Ֆրանցուզյան 63
Գագիկ Ավետիսյան 66

Կիրառական արվեստ

Էլինե Պողոսյան 68
Մարինե Գրիգորյան 74

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՁԱՅՆԸ

**Լուսանկարչական, գեղանկարչական
և կիրառական արվեստի
ստեղծագործությունների ժողովածու**

Համակարգչային շարվածքը՝ Տ. Թիլիքյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Շապիկի վրա օգտագործված է Էլինե Պողոսյանի
«Հին դուռը» գեղանկարը:

Ստորագրված է տպագրության՝ 10.03.2023:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 4.875:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023
publishing.ysu.am